«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Թեմա՝ Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը**

**Դաստիարակ՝ Նելլի Սիմոնյան**

**Մանկապարտեզ՝ « Արարատ քաղաքի թիվ 1 մսուր-մանկապարտեզ »**
**ՀՈԱԿ**

**2023թ.**

Բովանդակություն

Ներածություն----------3

Թեմա - Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը

1.1 Հայրենասիրական դաստիարակություն----------4

1.2 Ինչպես երեխային սովորեցնել սիրել հայրենիքը----------6

1.3 Հայ ժողովրդական բանահյուսությունը՝ նախադպրոցականների հայեցի դաստիարակության միջոց ----------9

4 Ազգային տոները որպես հայրենաճանաչողության կարևոր նախադրյալ----------14

Եզրակացություններ, առաջարկություններ----------19

Գրականության ցանկ----------20

# Ներածություն

Ժամանակակից հանրակրթության հրատապ խնդիրներից է՝ սովորողներին ծանոթացնել հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգությանը, նպաստել երեխաների հայրենասիրական դաստիարակությանը: Նախադպրոցական տարիքը երեխայի անհատականության ինտենսիվ զարգացման շրջանն է: Հենց այս տարիքում են դրվում մարդու աշխարհայացքի, շրջապատող աշխարհի նկատմամբ նրա վերաբերմունքի հիմքերը: Մտածելով հայրենասիրական զգացմունքների ծագման մասին՝ նրանք միշտ դիմում են մանկության տպավորություններին. սա պատուհանի տակի ծառն է, սա այն փողոցն է, որով նրանք քայլել են, և հայրենի մեղեդիները: Նախադպրոցական մանկության շրջանը նպաստավոր է հայրենասիրական զգացմունքների դաստիարակման համար, քանի որ հենց այս ժամանակ է մշակութային և արժեքային կողմնորոշումների ձևավորումը, երեխայի անհատականության հոգևոր և բարոյական հիմքը, նրա հույզերի, զգացմունքների, մտածողության զարգացումը, հասարակության մեջ սոցիալական հարմարվողականության մեխանիզմները, աշխարհում ինքնաճանաչման գործընթացը: Նախադպրոցական մանկության շրջանը բարենպաստ է երեխայի վրա հուզական և հոգեբանական ազդեցության համար, քանի որ իրականության ընկալման պատկերները, մշակութային տարածքը շատ վառ և ամուր են, հետևաբար մնում են հիշողության մեջ երկար ժամանակ, իսկ երբեմն էլ ամբողջ կյանքում, ինչը շատ կարևոր է հայրենասիրության դաստիարակության գործում: Հայրենասիրություն դաստիարակելը պահանջում է հետևողական աշխատանք, այն չի ձևավորվում միանգամից: Դրա ակունքները շատ խորն են, գալիս են նախնիներից, սկիզբ են առնում ընտանիքում, բակում, ընկերական և հասարակական հարաբերություններում, դառնում կայուն որակ և անձի անբաժանելի մաս ու բնավորության գիծ:

## 1.1 Հայրենասիրական դաստիարակություն

Հայրենասիրությունը ծագում է լատիներեն «պատրիոտ» բառից, նշանակում է՝ հայրենիք սիրող: Հայրենասիրությունը բարոյական բարձր որակ է: Այն սոցիալական դիրքորոշում է, որի հիմնական բաղադրիչը սերն է: Մարդու հայրենասիրությունը հանդես է գալիս և մարմնավորվում տվյալ մարդու՝ դեպի իր հայրենիքն ունեցած սիրո մեջ:

Սերը ոչ միայն հայրենիքի նկատմամբ է, այլ նաև հայրենիքում ապրող ժողովրդի նկատմամբ է, այլ նաև հայրենիքում ապրող ժողովրդի նկատմամբ: Երբ ասում ենք հայրենիք, ապա առաջին հերթին հասկանում ենք հայրենիքում ապրող ժողովուրդը: Եթե հայրենիքում ժողովուրդ չկա, ուրեմն հայրենիք չկա: Առանց հայրենիքի, առանց հարազատ ժողովրդի մարդը լքյալ է, ինչպես Ռոբինզոնը: Նշանակում է՝ հայրենիքից թանկ, ժողովրդից թանկ ոչինչ չկա: Ցիցորենն ասում էր. «Մեզ համար թանկ են երեխաները, մերձավոր ազգականները, բայց որևէ բանի նկատմամբ սիրո բոլոր պատկերացումները միավորված են մեկ բառի մեջ՝ «Հայրենիք»:

Ցանկացած մարդու համար իր հայրենիքը սկսվում է իր տնից, իր բակից, իր այգուց: Հայրենիքը սկսվում է իր երկրի մի թիզ հողից, մի կում ջրից, մի կտոր երկնքից: Եվ ամենակարևորը՝ իր մայրենից լեզվից: Եթե այս ամենը մարդը չի հասկանում, ապա «հայրենիք» հասկացությունը նրա համար կդառնա մի ինչ-որ անորոշություն:

Ուսումնական հաստատությունները, մանկավարժները, ծնողները պարտավոր են ձևավորել երեխաների հայրենասիրական զգացմունքները: Պարտավոր են նրանց մեջ սերմանել հոգատար վերաբերմունք հայրենիքի պատմության, մշակույթի, հայրենիքում ապրող հարազատ ժողովրդի, ազգի ավանդույթների, սովորույթների նկատմամբ: Անկախ տարիքից, հասարակության բոլոր անդամների մեջ պետք է սեր դաստիարակել հարազատ վայրերի, իրենց գյուղի, ավանի, քաղաքի, հայրենի բնաշխարհի նկատմամբ: Դաստիարակել հայրենիքը պաշտպանելու պատրաստակամություն, փաստացի օրինակներով երեխաների մեջ ամրապնդել սերը ժողովրդի նկատմամբ:

Լինել հայրենասեր նշանակում է մշտապել աշխատել հայրենիքի բարգավաճման, ժողովրդի բարօրության, բարեկեցության համար, «որդեգրել» հայրենիքում ընդունված, գործող օրենքները, ենթարկվել այդ օրենքներին, հարգել հայրենիքում սահմանված կարգն ու կանոնը, ունենալ գիտակցական կարգապահություն, մասնակցել տնտեսության, մշակույթի, գիտությունների, տեխնիկայի զարգացմանը, պահպանել ժողովրդի արժանապատվությունը, ոչ մի դեպքում չխաղալ նրա պատվի հետ: Հայրենիքը, ժողովուրդը համարել սրբությունների սուրբ սրբոցը, պաշտպանել հայրենիքը թշնամու ոտնձգություններից, հարկ եղած դեպքում, անգամ վերջին շնչում, մինչև արյան վերջին կաթիլը մարտնչել հակառակորդի դեմ, օրհասական պահերին բռունցքվել մայր ժողովրդի հետ, դառնալ հզոր «պարիսպ», փակել թշնամու՝ դեպի մեր հայրենիքը բերող բոլոր ճանապարհները: Հայրենասիրական դաստիարակության համար կարևոր դեր կարող են խաղալ մեր մեծ հայրենասերների, ֆիդայիների, Անդրանիկի, Նժդեհի, Դրոյի ապրած կյանքն ու գործունեությունը, Սարդարապատի հերոսներ Դանիել Բեկ և Պողոսբեկ Փիրումյանների, Սիլիկյանի անմոռաց կերպարները, Արցախյան երկու պատերազմներում անմահացած հերոսների, աշխարհահռչակ զորավարներ Բաղրամյանի, Բաբաջանյանի, Խանփերյանի, Իսակովի, մերօրյա հերոսների հավերժող օրինակները: Մեր սերունդների հայրենասիրական զգացմունքների ձևավորման գործում կարևոր դեր կարող են խաղալ մեր պետության խորհրդանիշները՝ գերբը, դրոշը, օրհներգը, զինանշանը, դրանց պատմության ուսումնասիրությունը: Հայրենասիրական դաստիարակութան համար մեծ դեր կարող են խաղալ մեր ժողովրդի պատմությունը, գրականությունը, մշակույթը, գրողների, գիտնականների, արվեստագետների հետ հանդիպումները, նրանց՝ հայրենիքի մասին պատմությունները, ստեղծագործությունները, զրույցները և այլն [1,348]

## 1.2 Ինչպես երեխային սովորեցնել սիրել հայրենիքը

«Հայրենիք» բառի նշանակությունն ու գաղափարն անհրաժեշտ է սերմանել երեխայի մեջ վաղ տարիքից: Երբ փոքրիկը կարողանում է տարբերակել տունը, մայրիկին, հայրիկին, տատիկին, պապիկին, պետք է խնամքով այս «հատուկ մանկական համակարգի» մեջ մտցնել նաև «հայրենիք» բառը: Առաջին հերթին երեխայի համար հայրենիքի մոդել է տունը: Տունը հայրենիքի մի մասն է: Եթե նա այնտեղ ստանում է ջերմություն, սեր, դաստիարակություն և զգում է իրեն ազատ, ապա նա ավելի շուտ կարող է հասկանալ, որ իր մեծ տունը իր հայրենիքն է, իսկ իր մեծ ընտանիքը՝ ընկերները, դաստիարակները, ուսուցիչները, բոլոր-բոլորը Հիմնական ինֆորմացիան երեխաները ստանում են երեք տարեկանից: Այս ժամանակահատվածում հատկապես պետք է ուշադրություն դարձնել դաստիարակությանը: Երեխային դեպի «հայրենիք» բառի գիտակցումը տանելու ուղին հեշտ է, պարզապես այդ ընկալումը պետք է ունենան նաև մանկավարժները: Ուսումնական հաստատությունում երեխաներին պետք է հաճախակի կրկնել մեր Հայաստանը, քո քաղաքը, քո փողոցը, մեր փողոցը, քո տունը, մեր տունը, մեր քաջ զինվորները, մեր բանակը, քո բանակը արտահայտությունները: Սովորեցնել հայրենասիրական երգեր, քանի որ դրանք իսկապես մտնում են երեխայի ենթագիտակցության մեջ և հետագայում ամրանում որպես հաստատուն գաղափար: Արմատացնել բառը՝ հայրենիք, Հայաստան և հետագայում մեխանիկորեն կրկնվող բառերն ու վերաբերմունքը կվերափոխվեն «գիտակից ընկալման»: Այս կերպ պետք է արմատացնել հայրենիքին նվիրվածության գաղափարը երեխաների մոտ: Փոքրիկի հաջողության գրավականներից մեկը այն է, երբ նա շրջապատված է առողջ գաղափարներով և դաստիարակությամբ: Նա գիտի սիրել իր հայրենիքը, իր արևը, իր տունը, պարզապես պետք է սովորեցնել նրան: Նա ինքնաբերաբար կկատարի «իր պաշտոնը»՝ մեծահասակներից առավել լավ: Փոքրիկի մեջ հայրենասիրության սերմնացանները պետք է լինեն ինչպես մանկավարժները, այնպես էլ ծնողները: Հայրենիքի հանդեպ սերը պետք է սերմանվի հենց վաղ տարիքից: Երեխան պետք է սովորի հարգել մեր պետության խորհրդանիշերը՝ օրհներգը, դրոշը, զինանշանը և պետք է իմանա դրանց խորհուրդն ու նշանակությունը: Պետք է հասկանա ու գիտակցի, որ օրհներգը լսում են ոտքի կանգնած ու լուռ, այդ ընթացքում մաստակ չեն ծամում, չեն

ծիծաղում: Պետք է ճանաչի մեր պետական դրոշն ու զինանշանը և գիտակցելով դրանց խորհուրդը՝ հարգանք տածի: Ստորև ներկայացնում ենք ՀՀ պետական խորհրդանիշերի մասին համառոտ տեղեկատվություն, որի մասին պետք է ծանոթացնել սաներին:

**ՀՀ Օրհներգ**

Մեր Հայրենիք,ազատ անկախ,
Որ ապրել է դարե դար
Իր որդիքը արդ կանչում է
Ազատ, անկախ Հայաստան:
Ահա եղբայր քեզ մի դրոշ,
Զոր իմ ձեռքով գործեցի
Գիշերները ես քուն չեղա,
Արտասուքով լվացի:
Նայիր նրան երեք գույնով,
Նվիրական մեկ նշան
Թող փողփողի թշնամու դեմ
Թող միշտ պանծա Հայաստան:
Ամենայն տեղ մահը մի է
Մարդ մի անգամ պիտ մեռնի,
Բայց երանի՝ որ յուր ազգի
Ազատության կզոհվի:

**Դրոշ**

Հայաստանի Հանրապետության դրոշ մեր պետական խորհրդանիշներից է: Հայաստանի Հանրապետության դրոշը եռագույն է՝ վերևից ներքև կարմիր, կապույտ, ծիրանագույն հորիզոնական հավասար շերտերով:

**Կարմիր գույնը** խորհրդանշում է Հայկական բարձրավանդակը, հայ ժողովրդի մշտական պայքարն ու թափած արյունը՝ քրիստոնեական հավատքի, Հայաստանի անկախության և ազատության համար:



**Կապույտ գույնը** խորհրդանշում է հայ ժողովրդի՝ խաղաղ երկնքի ներքո ապրելու կամքը: **Ծիրանագույնը՝** խորհրդանշում է հայ ժողովրդի տաղանդն ու աշխատասիրությունը:

## Զինանշան

Հայաստանի Հանրապետության ներկայիս զինանշանը Հայաստանի Առաջին Հանրապետության /1918-1920 թթ./ զինանշանն է, որի հեղինակներն են ճարտարապետ, Ալեքսանդր Թամանյանը և նկարիչ Հակոբ Կոջոյանը: Զինանշանը Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշներից է: Մեր զինանշանի կենտրոնում՝ վահանի վրա, պատկերված են Արարատ լեռը՝ Նոյյան տապանով և պատմական Հայաստանի չորս թագավորությունների՝ Բագրատունիների, Արշակունիների, Արտաշեսյանների, Ռուբինյանների զինանշանները: Վահանը պահում են արծիվը և առյուծը, իսկ վահանից ներքև պատկերված են սուր, ճյուղ, հասկերի խուրձ, շղթա և ժապավեն: Հայաստանի Հանրապետության զինանշանի հիմնական գույնն է ոսկեգույնը, պատմական Հայաստանի թագավորություններինը՝ կարմիր և կապույտ, իսկ վահանի վրա պատկերված Արարատ լեռը՝ նարնջագույն: Նշված գույները խորհրդանշում են Հայաստանի Հանրապետության դրոշի գույները: Տեղեկությունը յուրացնելու և ավելի տպավորիչ դաձնելու համար երեխաներին բաժանում ենք դրոշի և զինանշանի նկարները, որոնց նայելով պետք է գունավորեն: Նմուշ օրինակը ստորև:

**1.3 Հայ ժողովրդական բանահյուսությունը՝ նախադպրոցականների հայեցի դաստիարակության միջոց**

Հայտնի է, որ կրթությունն անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքների պահպանմանն ու նոր սերունդներին փոխանցմանը: Արդի փուլում անընդհատ կրթության շարունակականության համակարգում դրա զարգացման և բարեփոխումների գործընթացներն իրականացվում են բոլոր մակարդակներում, այդ թվում՝ նախադպրոցական կրթության ոլորտում:

Հայաստանի Հանրապետության մտավոր ներուժի սաղմերն այսօրվա երեխաներն են՝ վաղվա պետության կերտողները: Նախադպրոցական կրթության ոլորտում ինչպես երեխաների զարգացման բոլոր ուղղություններով, այնպես էլ ազգային դաստիարակության առումով բարեփոխումները ոչ միայն անհրաժեշտ են, այլև՝ անխուսափելի: Այս տեսանկյունից հայ ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերը, որոնք հարազատ են հայ ազգային հոգեբանությանը, առավել արդյունավետ կերպով կարող են ներգործել ավագ նախադպրոցականների հուզաշխարհի վրա: Մանկապարտեզում դրանց հմտալից կիրառումը կօժանդակի կրթադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Անհիշելի ժամանակներից հայ ժողովուրդն ստեղծել է գեղարվեստական խոսքի կատարյալ նմուշներ՝ հեքիաթներ, առասպելներ, հանելուկներ, շուտասելուկներ, առածներ, ասացվածքներ, որոնք էական նշանակություն են ունեցել երեխաների բարոյական դաստիարակության ասպարեզում: Պատահական չէ, որ դրանք արժանացել են Խ. Աբովյանի, Ղ. Ալիշանի, Հ. Թումանյանի, Ղ. Աղայանի և այլ նշանավոր մտավորականների բարձր գնահատականին: Այսպես, Ղ. Աղայանը դրանք համարել է ոչ միայն հայեցի դաստիարակության, այլև՝ երեխայի լեզվի մարզման և ազգային մտածողության կերտման միջոց:

Հայ մանկական գրականության մեջ առանձնահատուկ դեր ունեն հեքիաթները, որոնց միջոցով երեխաների մեջ դաստիարակվել են հայրենասիրություն, ազնվություն, աշխատասիրություն, ինչպես նաև ծուլությունը, չարությունը,շահամոլությունը և վախկոտությունը խարազանելու պատրաստակամություն: Հեքիաթն այսօր էլ շարունակում է մնալ նախադպրոցական տարիքի երեխաների ամենասիրելի և ընդունելի գրական ժանրերից մեկը: Հայ գրողներից շատերին (Ղ.Աղայան, Հ. Թումանյան, Աթ. Խնկոյան, Դ. Դեմիրճյան և ուրիշներ) հետաքրքրել են ժողովրդական հեքիաթները: Նրանց



կողմից կատարված մի շարք մշակումները մանկական գրականությունը հարստացնում են ինքնատիպ ստեղծագործություններով: Հովհաննես Թումանյանի հեքիաթները («Գառնիկ ախպեր», «Չարի վերջը», «Ուլիկը», «Կիկոսի մահը», «Ծիտը» և այլն) իրենց ճանաչողական, բարոյախրատական և իմացական ներգործուն ուժով դաստիարակել ու դաստիարակում են հայ երեխաներին Աթաբեկ Խնկոյանի կերպավորած կենդանական հեքիաթներն ունեն ազգային կոլորիտ: Դրանց աշխարհը հայկական է, կենցաղը՝ նույնպես հայկական: Կենդանիները բնորոշ են հայկական բնաշխարհին՝ կռունկ, աքլոր, աղվես, արջ («Կռունկն ու աղվեսը», «Գյուղացին ու արջը», «Աքլորն ու աղվեսը» և այլն): Այս հեքիաթների ունկնդրումը երեխաների մեջ ծնում է ազգասիրական զգացումներ, սեր հայրենի բնաշխարհի ու եզերքի նկատմամբ: Խիստ կարևոր է երեխաների մեջ ամրապնդել հայրենասիրության գաղափարը, այսինքն՝ արթնացնել սեր սեփական տան, փողոցի, քաղաքի, գյուղի ու երկրի նկատմամբ: Ժամանակակից մանկական գրողների մի մասը՝ Էդ. Ավագյան, Վ. Վարդանյան, Հ. Սևան, Ա. Շեկոյան, Ս. Մուրադյան և ուրիշներ, մշակել են մեծ թվով հեքիաթներ, որոնք ունեն ճանաչողական և դաստիարակչական արժեք: Հայրենի հողն անուշ է, հայրենի ջուրն անուշ է.- ահա ժողովրդի ընդհանրացումը: Նրա պատվիրանն է, որ մարդ պետք է ապրի իր հողում և իր տանը: Ժամանակակից մանկագիրներից Էդվարդ Ավագյանը նույնպես անդրադարձել է այդ թեմային և գրել «Ամենից լավ տունը» հեքիաթը: Հեղինակը հետաքրքիր ձևով փորձում է վաղ տարիքից երեխաների մեջ սեր ներշնչել հայրենի տան ու առվակի նկատմամբ. «Առվակի ափին, անտառին մոտիկ տնակում ապրում էր մի փոքրիկ ճուտիկ: Մի օր նա տարվում է խաղով, տնից հեռանում և մոլորվում անտառում: Վախից սկսում է լաց լինել: Նրա լացի ձայնը լսում է խլուրդը. խղճում է ճուտիկին և առաջարկում իր տուն գնալ, իր հետ ապրել: Բայց երբ ճուտիկը տեսնում է նրա խոր ու մութ բույնը, ասում է

. -Չէ՛, չէ՛, խլուրդի՛կ, մութ է քո բույնը,

Վախից չի տանի երբեք իմ քունը:

Ճուտիկը նորից լաց է լինում ու իր բույնն Այս անգամ էլ արտուտիկն է առաջարկում ապրել իր բնում: Երբ ճուտիկը վիթխարի բարդու վրա տեսնում է արտուտիկի հյուսած բույնը, ասում է. «Չէ՛, արտուտի՛կ, բարձր է քո բույնը, վախից չի տանի իմ քունը»:



Ճուտիկը նորից լաց է լինում, այս անգամ էլ բարի գորտն է առաջարկում նրան ապրել իր բնում և առաջնորդում՝ ճահճուտում, լպրծուն տիղմից սարքած բնում ապրելու:

-Ահա իմ տունը, դե՛ լող տուր, ջանի՛կ, մտի՛ր ու ապրի՛ր ուրախ, երջանիկ:

Ճուտիկը դարձյալ չի համաձայնում ապրել գորտի թաց բնում և հուսահատ լաց է լինում: Հեքիաթի վերջում ճուտիկին ծիտիկն է օգնում գտնել իր բույնը: Երբ վերջապես ճուտիկը հեռվից իր փոքրիկ բույնն է տեսնում, ուրախացած բացականչում է.

-Ահա, ամենից շատ սա է լավ տունը:

Հեղինակը պատկերելով տարբեր կենդանիների և թռչունների ապրելակերպը, որը հեքիաթի ճանաչողական կողմն է, երեխային օգնում է կողմնորոշվել կյանքում և հանգել ճիշտ եզրակացության. բոլորից լավ տունը մարդու համար իր տունն է, իսկ կենդանիների համար՝ իրենց բույնը:

Պարույր Սևակն անչափ սիրում էր մանուկներին: Նա իր կարճատև կյանքի ընթացքում հասցրեց միայն նրանց նվիրել «Ձեր ծանոթները» գրքույկը: Այն լույս տեսավ նրա մահվան օրը՝ 1971թվականի հունիսի 17-ին: Պարույր Սևակը մի առանձին հետաքրքրություն ուներ ավանդապատումների նկատմամբ: Նա վարպետորեն մշակել է դրանցից մի քանիսը և նվիրել մանուկներին: Հետաքրքիր կառուցվածքը, գեղեցիկ պատկերներն ու հմայիչ լեզուն հնարավորություն են տալիս այդ ստեղծագործություններն օգտագործել մանկապարտեզի ավագ խմբերի երեխաների ճանաչողական ունակությունները զարգացնելու համար: Դրանք միաժամանակ դաստիարակչական ներգործության իսկական նմուշներ են: Ահա դրանցից մեկը, որը կոչվում է «Հայոց լեռները»:

Գրավիչ է մուտքը՝ պարզ, անմիջական և միաժամանակ նման ժողովրդական պատումի: Երեխաները կարծես ներգրավվում են այդ պատմության մեջ, և հեղինակն այդ ստեղծագործության միջոցով պատմում է հայոց լեռների առաջացման գեղեցիկ առասպելը: Պարույր Սևակի հանճարեղ մտքի ու երևակայության շնորհիվ ստեղծվել են այնպիսի

պատկերային համեմատություններ ու նմանություններ, որոնք համոզիչ են երեխայի համար: Ասում են, թե մի ժամանակ,

Ինչքա՜ն առաջ՝ ի՞նչ իմանաք,

Եղբայրներ են եղել հսկա մեր լեռները:

Զարթնել են շուտ,

Ելել ոտի,

Նա՛խ կապել են իրենց գոտին,

11

Լվացել են պաղ ամպերում

Իրենց երեսն ու ձեռները,

Հետո՛ միայն «բարի լույս» են իրար ասել

Եվ իրարից «բարի լույս» են սիրով լսել:

Սակայն անցնում են շատ տարիներ, և «Եղբայրները ծերանում են»: Նրանք շուտ են քնում և ուշ վեր կենում, մոռանալով գոտին կապել՝ «բարի լույս» են իրար ասում.

Եղբայրները քարանում են,

Դառնում լեռներ հազար ու բյուր,

Նրանց աչքի արցունքները՝

Հազար աղբյուր,

Նրանց մեջքի գոտիները՝

Դաշտ ծաղկաբույր...

Պարույր Սևակն այս ստեղծագործությամբ ցանկացել է հայ երեխաների մեջ մշակել վաղ զարթնելու, լվացվելու և «բարի լույս» ասելու գեղեցիկ սովորույթը: Հեղինակն ստեղծագործությունն ավարտում է՝ պատվիրելով.

Զարթնել շատ շուտ, ելնել ոտի,

Մեջքին կապել ամուր գոտի

Այսինքն՝ միշտ գոտեպնդվել ու եղբորը գոտեպնդել...

Մանկապարտեզում իրականացվող ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացման գործում էական դեր կարող են խաղալ նաև ասացվածքներն

ու առածները: Վաղ հասակից երեխաների մեջ պետք է դաստիարակել հոգատար վերաբերմունք ընտանիքի մեծերի՝ տատիկի, պապիկի և մյուսների նկատմամբ: Հարկավոր է մշակել նրանց խոսքը լսելու և հանձնարարությունները կատարելու պատրաստակամություն: Սա ազգային յուրահատուկ հատկանիշ է, որը ձևավորվելու է դեռևս նախադպրոցական տարիքից: Եթե դա ժամանակին արմատավորվեր բոլոր օջախներում, ավաղ, մեր ծերանոցներում չէին հայտնվի երեխաներ ու թոռներ ունեցող ծերեր: Խորհուրդ ենք տալիս այս առումով օգտագործել հետևյալ ասացվածքները.

Մեծին լսողի ոտքը քարին չի դիպչի:

Ջուրը փոքրին, խոսքը՝ մեծին:

12

Այսպիսով, նախադպրոցական տարիքում հայ ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերին ծանոթացումը երեխաների մեջ ձևավորում է ազգային մշակույթ, վարք ու բարք և բարոյական հատուկ հատկանիշների հիմքեր: Դրանով էլ ստեղծվում է դաստիարակչական գործունեության մի յուրօրինակ ուղեցույց [2,88]:

**1.4 Ազգային տոները որպես հայեցի դաստիարակության կարևոր նախադրյալ**

Ուսուցման համակարգի հենց առաջին օղակից՝ մանկապարտեզից է սկսվում մանկան աշխարհաճանաչմանն ուղղված տարրական գիտելիքների յուրացումը: Հիմնականում այստեղ է ձևավորվում նրա վերաբերմունքը աշխարհի, մարդկանց, շրջապատի և վերջապես գեղեցկության նկատմամբ: Այստեղ է, որ նրա մեջ սերմանվելու են մարդուն այսօր այնքան անհրաժեշտ բարության առաջին հատիկները: Հայ երեխայի հոգում բարության և առաքինության առաջին սերմնացանը քրիստոնեական տարրական գիտելիքների ուսուցումն է:

Հայ երեխային հայեցի կրթությունը և դաստիարակությունն այնքան են անհրաժեշտ, որքան մեսրոպյան այբուբենը՝ հայոց լեզուն իմանալու համար: Մենք՝ մանակավարժներս, պարտավոր ենք ըստ արժանվույն կատարել մեզ վստահված գործը, այսինքն՝ հայ մանուկներին դաստիարակել հայեցի և քրիստոնեաբար:

Մենք՝ հայերս, մեր չմարվող հիշողությունն արյան միջոցով փոխանցել ենք սերնդեսերունդ: Մենք մեր հիշողության, մեր պատմության տերն ենք ու ժառանգորդը՝ Հայկ Նահապետից մինչև հավերժություն: Ուստի պետք է ուժ առնենք մեր ազգային մեծագույն մանկավարժներից՝ Խ. Աբովյանից, Մ. Նալբանդյանից, Ռ. Պատկանյանից և Ղ. Աղայանից: Նրանցից վերցնենք այն լավագույնը՝ ազգային մտածողության մանկավարժական շարժառիթներն ու ուղենիշները, որոնք այսօր էլ արդիական են: Հարկավ, խիստ անհրաժեշտ է նաև թերթել պրոֆեսոր Ռաֆայել Իշխանյանի հայեցի կրթությանը և դաստիարակությանը նվիրված բազմաթիվ հոդվածներն ու գրքույկները, որոնք ուղղված են մանկավարժներին: Երեխայի աշխարհընկալման, գեղագիտական ճաշակի և այդ ոլորտում տարրական պատկերացումների ձևավորման

տեսակետից առանձնահատուկ նշանակություն ունեն ազգային սովորույթները, ընտանեկան հանդիսությունները, տաղավար տոներին նվիրված հետաքրքիր միջոցառումները: Ինչ ծավալի էլ լինի միջոցառումը, միևնույն է, երեխան կամա թե ակամա դառնում է դրանց մասնակիցն ու դիտորդը: Այդ տպավորություններն աստիճանաբար երեխայի մտապատկերում իմաստավորվում են և դառնում տարրական գիտելիքներ՝ շրջապատի ճանաչողական համակարգում: Փորձը ցույց է տալիս, որ երեխայի գեղագիտական և քրիստոնեական դաստիարակության իմաստով անգնահատելի նշանակություն ունեն ծիսական,



ընտանեկան, ժողովրդական, ազգային հանդիսությունների մանկականացված միջոցառումները: Դրանք սրտամոտ են երեխային, քանի որ նա այս դեպքում դառնում է մասնակից ու կատարող: Նա արդեն պատկերացում ունի դրանց վեաբերյալ և մեծ սիրով ու ոգևորությամբ մասնակցում է այդ հանդիսություններին, հաճախ էլ լրացումներով ու հիշեցումներով օգնում դաստիարակին:

Առանձնակի հետաքրքրությամբ են անցնում Սուրբ Ծնունդն ու Ամանորը, Զատիկը, Համբարձման տոնը, Վարդավառը: Եթե Սուրբ Ծննդի և Զատկի տոնակատարությունները տոնում ենք մանկապարտեզում, ապա Համբարձումն ու Վարդավառը ցանկալի է կազմակերպվեն բնության գեղատեսիլ վայրերում,որի ժամանակ էլ երեխաներին սիրով և ոգևորությամբ կուղեկցեն, միջոցառմանը մասնակից կդառնան տատիկներ ու մայրիկները: Նման միջոցառումները մանկական հուզաշխարհում դառնում են վառ հիշողություն և ուղեկցում նրան ողջ կյանքի ընթացքում: Հասկանալի է և բնական, որ հայկական ծեսերը և ազգային ավանդույթները կյանքի առաջընթացի և տեխնիկայի հարաճուն զարգացման ժամանակաշրջանում աստիճանաբար դուրս են մղվում մեր կենսաձևից և արդիականությունից և տարիների ընթացքում դառնում են անցյալի հիշողություն: Ցավալի է, բայց փաստ , որ այժմ արդեն շատ ու շատ ազգային գեղեցիկ տոներ ու ծիսակատարություններ անցել են մոռացության գիրկը՝ դառնալով միայն ավագ սերնդի հիշողությունը: Մանկավարժներիս նպատակը պետք է լինի, հնարավորության սահմաններում, մանակավարժական նոր մեթոդներով ու մոտեցումներով, թարմ մտահղացումներով, նորացված միջոցներով՝ նոր սերնդի համար պահպանել ազգային, հայեցի, քրիստոնեական մտածելակերպը: Մանկապարտեզը

համակողմանիորեն զարգացած մարդու ձևավորման, բարոյական և հոգևոր արժեքների միասնության ապահովման հենասյուներից մեկն է: Այստեղից երեխան իր հետ կյանք կտանի բարության, գեղեցկության, ուրախության և սիրո առաջին սերմերը:



## Սուրբ Զատիկի տոնակատարությունը

Քրիստոնեական տաղավար տոներից մեկը՝ Զատիկը, մանկապարտեզում վերածվում է մի շքեղ հանդիսության: Այն իսկական հայեցի դաստիարակության հրաշալի օրինակ է: Կարևոր է, որ տոնակատարության կազմակերպիչները պահպանեն ծիսակարգը և երեխաներին ընկալելի դարձնեն դրա բովանդակությունն ու աստվածային խորհուրդը:

Զատիկը հեթանոսական տոն լինելով, հիմնականում բնորոշում է բնության զարթոնքը և բեղմնավորումը: Նոր կյանքի սկիզբը խորհրդանշող ձուն, ինչպես և կենաց ծառը հին հայերը վերագրում էին մեռնող և հարություն առնող բնության աստծուն՝ Արային: Հետագայում այս տոնը քրիստոնեական օրացույցում արժևորվեց և կապվեց Հիսուս Քրիստոսի հարության հետ: Արդեն երկու հազարամյակ քրիստոնյա աշխարհի մարդիկ Սուրբ Զատիկի օրը իրար ավետում են. «Քրիստոս հարյավ ի մեռելոց» և պատասխանը լինում է. «Օրհնյալ է Հարությունը Քրիստոսի»:

Այս տոնակատարությունն իր մեջ ամփոփում է հայկական գեղեցիկ սովորույթներ, կենցաղային ավանդույթներ, անգամ՝ զուտ հայկական ուտեստների պատրաստման և հյուրասիրման տարրեր: Միջոցառման անցկացումը տևում է մեկ շաբաթ: Շաբաթվա ամեն մի օրը կոչվում է Ավագ և իմաստավորվում կոնկրետ գործով: Վերջնական տոնը՝ բուն Զատիկը, կատարվում է շաբաթվա վերջում՝ կիրակի օրը:

Տոնակատարությունը և՛ մեծերի, և՛ երեխաների համար է: Դրա հիմնական մասնակիցները դառնում են ծնողներն ու երեխաները: Նախընտրելի է մանկապարտեզ հրավիրել նաև ավագ տատիկներին, իսկ եթե ավագները բացակայում են, ապա նրանց փոխարինում են

երիտասարդները: Այդ միջոցառումը մեծ խորհուրդ է պարունակում: Սովորաբար մանկապարտեզի հանդեսներին մասնակցում են մայրիկներն ու հայրիկները, և ստվերում են մնում հատկապես մեծ տատիկները: Կարևոր է, որ երեխան փոքրուց մեծարի, օգնի, հարկ եղած դեպքում նաև խնամի ընտանիքի ամենաավագներին: Տոնին նախապատրաստվելու համար նախապես երեխաները դաստիարակների օգնությամբ մատուցարանների մեջ ցանում են ցորեն:



Դրա կանաչ ծիլերն օգտագործում են սպասք ձևավորելու և ածիկ պատրաստելու համար: Ավագ երկուշաբթի պատրաստում են զատկի թեմաներով բացիկներ, կոլաժներ, նկարում են նկարներ: Ավագ երեքշաբթի, զբոսանքի ժամանակ երեխաները մանկապարտեզի բակի ուռենուց բերում են ճյուղեր՝ տոնական զարդարանքների համար: Ավագ չորեքշաբթի երեխաները մի քանի մայրիկների, դաստիարակի և խոհարարի հետ, հետճաշիկից հետո խոհանոցում պատրաստում են հայկական կլոր գաթա, փոխինդ և հալվա: Ավագ հինգշաբթի՝ հետճաշիկից հետո երեխաները մի քանի տատիկների և խոհարարի օգնությամբ թակիչով ծեծում են ծլած ցորենի ծիլերը, հյութը քամում, խառնում են ալյուրի շփոթին և, դանդաղ խառնելով, եփում են մեր ավանդական, նախապապերի, նախատատերի սիրած կերակրատեսակներից մեկը՝ ածիկը: Ավագ ուրբաթ երեխաները ծնողներից մեկի հրավերով, օրվա երկրորդ կեսին, դաստիարակի ուղեկցությամբ այցելություն են կատարում: Տանը մասնակցում են խնոցի հարելու արարողությանը: Այդ ընթացքում երգում են «Խնոցի, ջան խնոցի»-ն և, ստացված կարագն ու թանը վերցնելով, վերադառնում են մանկապարտեզ: Ավագ շաբաթ օրը երեխաները ծնողի հրավերով և դաստիարակի ուղեկցությամբ այցելում են հացատուն ու ականատես լինում թոնրի մեջ հացի թխման արարողությանը: Նրանք երգում են «Լավաշ ենք թխում» երգը, ճաշակում հյուրասիրած հացն ու պանիրը և, վերցնելով լավաշները, վերադառնում մանկապարտեզ: Այդ օրը երեխաները, դաստիարակի օգնությամբ, սոխի կճեպներով և այլ նյութերով ներկում են խաշած ձվերը և նկարազարդում: Տներ այցելելու արարողությունը հատուկ նպատակ է հետապնդում: Հայտնի է որ, շատ քիչ ընտանիքներում են պահպանվել իսկական խնոցի և թոնիր, դրանք փոխարինվել են ժամանակակից սարքավորումներով: Ցանկալի է, որ երեխաները տեսնեն հնադարյան այդ մասունքները, որովհետև վաղ թե ուշ դրանք էլ կդառնան հուշ և պատմություն

ու կմտնեն թանգարան: Իսկ երեխաների հիշողության մեջ կմնա իրենց նախատատերի աշխատանքային կենցաղը: Թե՛ մեծերը, թե՛ փոքրերը անհամբերությամբ սպասում են կիրակի օրվան՝ Զատիկին: Երեխաներն ուռենու ճյուղերով, զատկի թեմայի նկարներով, կոլաժներով զարդարել են դահլիճը և մուտքը:

17

Դահլիճում երեխաների սեղանները և աթոռակներն այնպես են դասավորվում, որ ամեն սեղանի շուրջ նստելու են երկու տատիկներ և իրենց երկու թոռնիկները: Երեխաներն առաջնորդում են իրենց տատիկներին, օգնում նրանց՝ նստելու սեղանների մոտ: Իհարկե, պարբերաբար հյուրասիրում են նրանց: Սեղաններին զուտ հայկական ուտեստներ են՝ լավաշպանիր, խնոցու կարագ, ածիկ, հալվա, գաթա, փոխինդ, բրնձով, չամչով փլավ, թան և զամբյուղով գունավոր ձվեր՝ օրվա խորհրդանիշը: Սկսվում է հանդեսը: Երեխաները կազմում են խաչի տեսարան և արտասանում տերունական աղոթքը: Այնուհետև ավետում են. «Քրիստոս հարյավ ի մեռելոց»: Հնչում է պատասխանը. «Օրհնյալ է Հարությունը Քրիստոսի»: Դաստիարակը վառում է մոմերը: Երեխաներն արտասանում են, երգում, պարում, փոքրիկ թատերականացված օպերետ բեմադրում: Բոլոր ելույթներում կարմիր թելի նման անցնում է զատկական թեման: Այնուհետև հաջորդում են հանելուկները: Դրանց խանդավառությամբ պատասխանում են նաև տատիկները և իրենց թոռնիկներից ստանում մրցանակներ՝ բացիկներ: Մեծ ոգևորություն է տիրումդահլիճում, երբ տատիկները մասնակցում են երգի և ասմունքի մրցույթին: Մրցույթին մասնակցում է նաև մանկապարտեզի ողջ անձնակազմը: Դրան հաջորդում են Ձվերի խաղը… Միջոցառման վերջնակետը դառնում է հայկական ժողովրդական պարը, որին մեծ խանդավառությամբ մասնակցում են տատիկները, բոլոր մեծերը և փոքրերը: Հրաշալի տրամադրությամբ ավարտվում է մեկշաբաթյա միջոցառումը: Այդ ընթացքում երեխան գործում է ազատ, անկաշկանդ, ինքնավստահ, տանտիրոջ իրավունքով: Չէ՞ որ ինքն է մասնակցել բոլոր աշխատանքներին. ինքն է իր տատիկին առաջնորդել, հյուրասիրել, մրցանակ շնորհել: Երեխայի մեջ ձևավորվում է ինքնագնահատականը, ինքնահաստատման կայուն նախադրյալ և արժանապատվության զգացում: Զատկի, ինչպես նաև Համբարձման ու Վարդավառի տոնակատարությունները սրտամոտ են երեխաներին: Դրանք հայեցի դաստիարակության և կրթության, գեղագիտական, բարոյական, ինչու չէ, նաև պատմական՝ անցյալը իմանալու,

գնահատելու և սովորելու տեսակետից, հրաշալի դասեր են և հարստացնում են մանկական մաքուր ու ջինջ հոգեաշխարհը [3, 61]:



Սաների իմացական պատկերացումների ձևավորման, ճանաչողական հետաքրքրությունների, հաղորդակցման հմտությունների զարգացման , ազգային արժեքների, տոների ծեսերի վերաբերյալ տարրական պատկերացումների ձևավորման , իրենց երկրի տեսարժան վայրերի , հերոսների, խորհրդանիշների մասին գիտելիքների ամրակայման նպատակով կազմակերպվել են հետևյալ գործունեության ձևերը՝ արմատացնելով հայրենիքին նվիրվածության գաղափարը, սվորոցնելով հարգել մեր պետության խորհրդանիշները՝ օրհներգը, դրոշը, զինանշանը:

Անցկացվել են <<Հայաստանն իմ տունն է>>, <<Իմ քաղաքը, իմ փողոցը>> թեմաներով թեմատիկ պարապմունքներ:

Անցկացվել է միջոցառում՝ <<Տոնդ շնորհավոր, Հայաստան>> խորագրով:

Կազմակերպվել է ճանաչողական էքսկուրսիա՝ << Իմ քաղաքը, իմ փողոցը>> քաղաքային պուրակ, որտեղ սաները հարգանքի տուրք են մատուցել , ծաղիկներ խոնարհել հանուն հայրենիքի զոհված հայորդիների հուշակոթողին և խոստացել միշտ վառ պահել մեր սուրբ նահատակների հիշատակը։

Երեխաներին հայեցի դաստիարակության ձևավորման,ազգային արժեքների երեխայի հոգում բարության և առաքինության սերմանման համար, ազգային սովորությունների հաղորդակից անելու նպատակով իրականացվեց մշակութային այց <<Մամիկի տուն>> մշակութային օջախ, որտեղ երեխաները հաղորդակից և մասնակից դարձան ,ծանոթացան ազգային տոներին, ծեսերին, խաղացին ազգային խաղեր, ազգային ուրախ երգ ու պարով մասնակցեցին հացթխիկի, թթուդրեքի արարողություններին։ Լսեցին հին հայկական ժողովրդական հեքիաթներ:

Մշակութային կարողականության ձևավորում, ազգային մշակութային առանձնահատկությունների, հայրենի երկրի մասին կատարում է գրագետ ընտրություն, այդ առնչությամբ արտահայտում է իր կարծիքը:

**Հետազոտական աշխատանքի կապը չափորոշչի հետ՝**

ԽՀ (բ, ժ) , Ի(գ, ե), ՀՍԱ(ա,թ), Շ(գ,է,թ)

**Եզրակացություններ, առաջարկություններ**

Պետք է հստակ գիտակցել, որ հայրենիքը սոսկ աշխարհագրական միջավայր չէ, այլ հոգևոր արժեքներով հարուստ ու սրբազան անկյուն, տարածք, որը քոնն է և յուրաքանչյուր հայինը: Հայրենասիրությունն ամենաուղղակի առնչությունն ունի ծնողասիրության ու որդեսիրության հետ: Պատմությունն ու մշակույթը այդ իմաստով լավագույն ուսուցիչը կարող է լինել սաների համար: Սաների բարոյական նորմերի, հայրենասիրության ձևավորման արդյունավետությունը երևում է այն ժամանակ, երբ դաստիարակության խոսքային մեթոդները զուգակցվում են գործունեության տարբեր ձևերի հետ, և սանը այդ գիտելիքները դրսևորում է իր առօրյա վարքում՝ տանը, դպրոցում, ընկերների շրջանում:

Երեխայի համար հայրենիքը սկսվում է տանից, հայրենիքի և նրա ավանդույթների հանդեպ սերը ներառված է «հայրենասիրություն» հասկացության մեջ: Հայրենիքի և նրա հերոսների պատմության հետ ծանոթությունը սկսվում է դաստիարակչական գործունեությամբ, որը ներառում է տարբեր մեթոդներ՝ դիտումներ, զրույցներ, էքսկուրսիաներ, ժամանցի երեկոներ, տոնական համերգներ:

Աճող սերնդին հայրենասեր դաստիարակել նշանակում է մշտապես աշխատել հայրենիքի բարգավաճման, ժողովրդի բարօրության, բարեկեցության բարձրացման գործին նրան հաղորդակից և մասնակից դարձնելու համար, «որդեգրել» հայրենիքում ընդունված օրենքները, դաստիարակել դրանց ենթարկվելու ունակություն, հարգել սահմանված կարգ ու կանոնը,

ունենալ գիտակցական կարգապահություն, մասնակցել տնտեսության, մշակույթի, գիտության ու տեխնիկայի զարգացմանը, ժողովրդին պաշտպանել թշնամու ոտնձգություններից, հարկ եղած դեպքում կյանքը չխնայել հայրենի երկրի համար, քաղաքացու մեջ ձևավորել հպարտության զգացում սեփական երկրի, հարգանք՝ նրա անցյալի նկատմամբ



**Գրականության ցանկ**

1. Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն, Երևան,2005թ.

2. Նախաշավիղ գիտամեթոդական հանդես N5-6, 2008թ.

3. Նախաշավիղ գիտամեթոդական հանդես N1, 2011թ.

4. В. Б. Орлов, В. И. Лесняк.Патриотизм как ценность гражданского общества,

Вестник Югорского государственного университета, 2006, Выпуск 3.

5. Зорькин В., Патриотизм истинный и ложный // Диалог. 1994. N9, 10.